



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7

Հեռ. 060650050

Կայք [gegharkunik.mtad.am](http://gegharkunik.mtad.am)

Էլ. փոստ [gegharkunik@mta.gov.am](mailto:gegharkunik@mta.gov.am)

N\_\_\_\_\_

-----2019 թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ  
ՎԱՀԵ ԷՆՖԻԱԶՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Էնֆիաջյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի դեկտեմբերի 2-ի N 19/0273 գրությանը՝ տեղեկացնում եմ, որ մարզում ընթացիկ տարում ճանապարհների անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում իրականացվել են տարբեր նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, միջին նորոգման և պահպանության աշխատանքներ:

Ճանապարհների բաժանարար հոծ գծի փոխարեն բետոնե արգելապատնեշների կառուցումը կամ դրան փոխարինող մետաղական ճոպանների տեղադրումը նպատակահարմար չենք համարում, քանի որ մարզի ճանապարհային ցանցի ասֆալտբետոնյա ծածկի լայնությունը թույլ չի տալիս նման ճանապարհային կահավորանքի կառուցման կամ տեղադրման աշխատանքներ իրականացնել:

Ճանապարհային կոնստրուկտիվ տարրերի (ճանապարհային գծանշումներ, ճանապարհային ցանկապատեր և ուղղորդ սարքավորումներ) պահպանման աշխատանքների գնահատման և հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ պարբերաբար ՀՀ կառավարության 04.11.2010թ. N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն իրականացվում են ուսումնասիրություններ:

Ճանապարհների պահպանման և սպասարկման շրջանակներում անհրաժեշտության դեպքում տեղադրվում են նոր ճանապարհային նշաններ, վերականգնվում են վնասված ճանապարհային նշանները, ինչպես նաև կատարվում են նշանների տեսանելիությանն ու մատչելիությանն ուղղված աշխատանքներ:

Ճանապարհային նշաններով կահավորված են մարզի տարածքում գործող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհները, իսկ չկահավորված մարզային (տեղական) նշանակության ճանապարհների մասով 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:

09.12.2019

X 

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հարգանքներով՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Քաղաքաշինության վարչություն  
Կատարող՝ Գ. Խաչատրյան  
060 650619